

**ԿԱՌՈՒՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ), ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ  
ՇԵՆՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ՑԱՆԿ**

- Դիմում-հայտ
- Անձնագիր և սոցիալական ապահովության քարտ
- Հաճախորդի հետ բնակվող (խնամակալության տակ գտնվող) անձանց անձնագրերը
- Փաստացի բնակության վայրից տեղեկանք գրանցման (հաշվառման), և ընտանիքի կազմի վերաբերյալ՝ տրված իրավասու մարմնի (տեղական ինքնակառավարման մարմին, ԲՇՏ, Համատիրություն, Լիազոր ներկայացուցիչ և այլն) կողմից
- Ամուսնության վկայական, ամուսնալուծված կամ ամուրի լինելու դեպքում համապատասխանաբար ամուսնալուծության կամ մահվան վկայականները)
- Համատեղ կյանքում ձեռք բերված անշարժ գույքի գրավադրման դեպքում ամուսինների գրավոր համաձայնությունը՝ անշարժ գույքը գրավադնելու վերաբերյալ
- Տեղեկատվություն (պետ. ռեգիստրից, դեպոզիտարիայից, ռեեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում 10% և ավելի մասնակցության վերաբերյալ:
- Բանկերում ցայահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին ամսվա շրջանառության և մնացորդի վերաբերյալ
- Տեղեկանք աշխատավայրից, որտեղ պետք է նշվի զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը և/կամ հայտարարություն եկամուտների վերաբերյալ (երբ Հաճախորդը և (կամ) երաշխավորը չեն աշխատում), ինչպես նաև առկայության դեպքում եկամուտների վերաբերյալ այլ փաստաթղթեր,
- Աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (բացառությամբ՝ պետական ծառայողների)
- Տեղեկություններ ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ
- Կառուցվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության, սեփականության իրավունքի ծագման (առուվաճառք, նվիրատվության պայմանագիր և այլն) համար հիմք հանդիսացող, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող փաստաթղթեր
- Կառուցվող անշարժ գույքի (բնակելի, հասարակական, արտադրական), հողամասի ձեռք բերման քաղաքաշինական թույլտվությունների (ճարտարապետաշինարարական առաջադրանք, հաստատված նախագիծ, շինարարական թույլտվություն) առկայություն
- Կառուցվող անշարժ գույքի (բնակելի, հասարակական, արտադրական անշարժ գույքի միավորի) հասցեավորման և իրավունքների գրանցման փաստաթղթերը
- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից տրված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք, (ներկայացվում է համապատասխան վարկառուի հայտը Վարկային կազմակերպության կողմից հավանություն ստանալուց հետո)
- Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Վարկային կազմակերպությունը: